ՊԱՆԴՈՒԽՏԻ ԽՕՍՔԵՐ

Անծանօթներ հանդիպելով ինձ կ'ըսեն.
— Ողջո՞յն, պանդուխտ. որպիսի՜ են այս վայրեր։
Է՜հ, պանդուխտին ողջոյն մի տաք. ան չըկայ.
Այդ ողջոյնին ձայնն ականջիս չունչ մ'է լոկ.
Այս վայրերու տեսիլէն զայն լոկ գիտեմ
Որ օտար են և հայրենեացս աննըման։
Ողջո՞յն, ո՜հ, այն ողջոյն՝ զոր տան սիրելիք.
Վայր՝ այն միայն՝ որ կը կոչուի հայրենիք.
Դեղ է սըրտի, ցօղ զովարար այն ողջոյնն
Որ տրտմեալները զուարթ ծաղկի կը փոխէ։
Իսկ ողջոյններն այդ՝ դառն են ինձ, որ կու գան
Բերել նոր յուշն ողջոյններուն հին. և յուշն
Ողջունատու մեր սիրելեաց կը բերեն,
Բայց ո՛չ վայելքն հայրենիքին և անոնց։

Ա՜հ, պանդուխտին ողջոյն մի՛ տաք, մի՛ ըսէք,
Մի տապալէք արեան մէջ սիրտը թաթաւ.
Թէ թշուառին հայրենի լուր մը չըկայ,
Թող յիշատակն անգամ անյուշ կորսըսի.
Օտար երկրի մէջ չեմ տեսչար ողջոյնի,
Մինչեւ լըսեմ զայն երկրիս մէջ երկնանման։

Թրգմ. Հ. Ե. Փ. Ալիշան (Տթրոնենի)



ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐՈՒՆ ՈՐ Կ'ԱՆՑՆԻՆ

Տարտա՞մ, երե՞ր, լուսընկային տակ մեղոյշ
Կը յառաջէք. դէպ ի ո՞ւր...
Ան հըսկումի՛ է այս գիշեր. մինչեւ ուշ,
Խոցուած երգէն ձեր տըխուր՝

Զոր թռիչքին մէջ լըսեց ծիծառն ալ վերջին։
Կը պատմէ վաղն արցունքով
Ալիքներուն իմ սըգաւոր Արաքսին
Կարօտն հոգւոյն ձեր խըռով։

Ու ձեր ճամբուն՝ ո՞րքան աստղեր էք ցաներ
Բորբ յոյզերովը պարման...
Որ կ'արիւնին այս իրկուն, զերդ տերեւներ
Հարբած ծոցին մէջ աշնան։

Երբ այս գիշեր ձեր խոնջ ճակատը նիրհէ
Ցարկերուն տակ անծանօթ,
Ինչպէս երազ, ինչպէս տեսիլ ոսկիէ
Հոգիներուն ձեր կարօտ՝

Լքուած յուշերը պիտի գան հին բոյնէն
– Երազանքի հանգըրուան –
Հոգիներուն ձեր փարելու անձկօրէն
Որպէս սրտեր սիրական։

Ու կը նայի մենաւոր դէտը հեռուն
Ցըրիւ եկած պարմանին
Ամպերուն պէս հոդմատատան, անկայուն
Որ պահէ պահ կ'անհետին...

Հըսկէ՛ հոգեակ, դեռ կ'արտասուէ լուսընկան.
Ահա պաղ հոգին հիւսիսին
Որ կը բերէ քեզ «Ծիծեռնակ»ն ողբական
Պանդուխտներուն որ կ'անցնին...։

Հ. Ե. Փ.

ԳՐԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԷՆ

Զեռագիր տետրակի՝ մը մէջ՝ զոր ազնուօրէն խմբագրութեանս տրամադրութեան յանձնեց հրատարակելու «Բազմավէպ»ին մէջ մեր յարգելի բարեկամը՝ ծանօթ հրապարակագիր Պրն. Յ. Ճ. Սիրունի, կը հանդիպիմ սիրուն տաղի մը որուն վերնագիրն է «Երգ կաքաւի Վանայ լեզուաւ». ինչ որ արդէն մեր Միսիթ. Հայրերը հրատարակած են «Վանեցւոց երգ կաքաւու» տիտղոսով՝ «Բազմավէպ»ին մէջ (1850, էջ 230)։ Ստորեւ՝ վերջինս է որ կ'արտատպենք՝ իբրեւ ընտրելագոյն բնագիր, քան Պ. Սիրունիի օրինակը՝ որ աղաւաղ ընթերցումներ շատ ունի։

Առաջին տողերն իսկ կարդալով անդրադարձանք որ այդ տաղը յար և նման էր Թումանեանի «Կաքաւի գովքը[2]» ժողովրդական անոյշ երգին։

Հարկ մը չկայ երկար փաստեր ու ապացոյցներ բերել հաստատելու համար անոնց նմանութենէն աւելի գրեթէ նոյնութիւնը գաղափարի, իմաստներու և մինչեւ իսկ բառերուն մէջ։

Հոս կը զետեղենք զանոնք իրարու դիմաց բաղդատական սիւնակներով, ուր իսկոյն աչքի պիտի զարնէ նոյնութիւնը զոր շեշտեցինք։

Ժողովրդական երգ

(Գրուած շուրջ 1830ին, և հր. 1850ին)

ԵՐԳ ԿԱՔԱՒԻ (ՎԱՆԵՑԻՈՑ)

Արեւ տէպաւ[3] սարին վերէն, խօրօտիկ խօրօտիկ[4]
Կաքաւաւ ելաւ իրեն բէոնէն[5]
Բարեւ արեց ծաղկներէն
Թաւ եկաւ սարի ծերէն. խօրօտիկ խօրօտիկ։
Ա՜յ խօրօտիկ խօրօտիկ
Ա՜յ սիրունիկ կաքաւիկ։

Երբ կաքաւուն ձէն կը լսեմ
Էրդիսն ի վեր դիւս կ'իրիչկեմ[6]
Կաքաւ կիւ գայ կըրկըրալով
Դարին վերէն շորորալով
Ա՜յ... անուշիկ կաքաւիկ։

Քէո բէոն հինած[7] ծաղկըներով
Ոըհան նարկիս նունուֆարով
Քէո տեղ լցուած է շաղերով
Դիւ կի մայլիս անմահ հոտով.
Ա՜յ... անուշիկ կեաքաւիկ։

Քէո փեսուրներ են փափուկիկ
Քէո վիզն երկէն, կըտուց պզտիկ,
Քէո թեւին գէոն[8] է նխշունիկ
Դիւ անուշ ես քանի եղունիկ[9].
Ա՜յ... անուշիկ կաքաւիկ։

Թումանեանի երգը

(Գրուած շուրջ 1900ին, և հր. 1908ին[3*])

ԿԱՔԱՒԻ ԳՈՎՔԸ

Արեւ բացւեց թուխ ամպերէն,
Կաքաւ թըռաւ կանանչ սարէն
Կանանչ սարէն, սարի ծէրէն
Բարեւ բերաւ ծաղիկներէն։
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Նախշուն կաքաւիկ։

Քու բուն հիւսած ծաղիկներով՝
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քու տեղ լըցուած ցօղ ու շաղով,
Քընես, կելնես երգ ու տաղով։
Սիրունի՛կ, եւն։

Քու թեւ փափուկ ու խատուտիկ
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ
Կարմիր կարմիր տոտիկներով
Կը չօրօրաս ճուտիկներով։
Սիրունի՛կ, եւն։

digitised by A.R.A.R.@